

հայ տպագրիչներուն գեղարուեստական ճաշակին : Գ. Էջին ոտանաւորն արտագրուած է 1777 ին Էջմիածին տպուած «Կարգ բաղման կարգաւորաց»-էն որուն Բ. Էջի աղբարանական պատկերին շուրջն ու մէջը տեղադրուած է միեւնոյն ոտանաւորը : Յաւարտ օրացոյցի՝ կան լրանի մը ոտանաւորներ և շանկան բծշկարան մը ամսացոյց : — Բերա՝ Մինրան Պետրեկեանի տունը 1789 ին տպուած մեծադիր **Նարեկ** մը կայ, որուն ձակատին վրայ «ի տպարանի Պետրոսեան Ստեփաննոսի, ՌՄԼԸ» կը կարդանք : Այս գիրքին ո՛չ Հ. Ղազիկեանի «Մատենագիտութեան» մէջ կը հանդիպինք, ոչ ալ Հ. Գափրանեանի ձեռագիր ցուցակին մէջ : Հետաքրքրականն այն է որ տպագրողին կէս Էջնոց Յիշատակարանը սա հակառակն տողը կը պարունակէ. «Ի տպարանի Աստուածատուրի որդոյ Յօնաննիսի», արդ, 1776 ին Յովհաննէս զաղրած է արդէն միայնակ գործել և իր գաւկին՝ Պօղոսի հետ է մինչեւ 1790 : Ի՞նչպէս մեկնել ուրեմն նոյն **Նարեկ** ին ձակատին վրայ դրոշմուած **Պետրոսեան Ստեփաննոս** անունը . երկու տպագրիչներ արդեօք ձեռնամու՛ւն եղեր են միեւնոյն գործին : Կան նաեւ յաւելածական Էջեր՝ 1-4 բութարկուած, ուր դրուած է «Առ. առ. աշնորն այլն Այ.» խորագիրով 36 տուն երկար ոտանաւոր մը գրաբար, իւրաքանչիւրը 4 տողնոց. որոնց սկզբնատառերը քով քովի բերուելով կը կարդացուի «տ. պ. ա. գ. բ. օ. ղ. Ած. ա. տ. ո. լ. բ. և. ո. բ. դ. ո. չ. Յ. օ. հ. ա. ն. ն. ի. ս. ի. ա. ս. ա. ց. ե. ա. չ.» պարբերութիւնը :



46. **Յովհաննէս եւ. Յակոբ** (երկուքն ալ «Տիրացու») . — Մեր քով գտնուած «Տաղարան»-էն դատելով, տպագրութիւննին անշահ է, պտղած և մաշած տառերով : — Հրատարակած են հետեւեալները . — Գիրք վկայարանութեան Ս. Մարիանէ կուսին, 1766 : — Տաղարան փոքրիկ, Պաղտասար զպրի ասացեալ զանազան գտնով : — Շարական, 1768 : — Ծաղկոցիկ քրիստոնեական ուսման, յոյժ հարկաւոր նորափրիք մանկանց, 1769 . (խոշորագիր, անհարթ փայտափոր պատկերներով, աստղափակ էջերով, Տիվրիկցի հանգ. Մհտ. Խաչատուրի որդի Մհտ. Պօղոսի արդեամբ տպուած) : — Մէջ բերենք «Պաղտասար պարտաւոր զպիր»ի **Տաղարան**էն հատուած մը . — «Արի՛ սեր իմ . . . արի՛ նովիս բարի . զիս ի յօտար երկիր տարի, «աւաղ, աւաղ . ել ի խնդիր մոլորելոյս, ել ի խնդիր քո ոչխարիս : . . . Կամաւս ի քէն խոտո-«րեցայ, շոյր մոլոր ոլորեցայ, յանգիւտ տեղիս մոլորեցայ : . . . Ես ինձ արարի . . . զիպեալ «գարարի . . . զբարին բողեալ եւ չարարի : . . . Գու եւ խնդրօղ մոլորելոց, յուղիղ ռանէն ոլորե-լոց . ո՛վ այցելու զըլորելոց, աման, աման» . . . Եւն : Անկանոն բութարկուած էջերէն վերջ գետե-ղուած է Ղարիպի հռչակաւոր **Կուռնկ** երգը, «ղովեցաւ աստ տաղս այս՝ առ ի լնուլ զպա-րապ երեսն բոլորցս :



47. **Յովհաննէս եւ. Գիւղոս** (Աստուածատուրեան) . — Իրենց և իրենց գեր-դաստանին մասին խօսեցանք բաւական 32րդ բուսամարով : — 1777-էն սկսելով մինչեւ 1790 հայր և որդի գործակցաբար բանեցուցած են տպարաննին՝ հետեւեալները հրատարակելով . — Օրացոյց (*) : — Ճառ. վասն ծննդեան և չարբարանաց Յս. ի Քս. ի, 1777 : — Տեսրակ տօնացոյցի, 1778 : — Գիրք աղօթից (եկրեմ Խորին Ասորոյ), 1779 և 1788 : — Գիրք պատմութեան Ս. Երուսաղեմի (Հաննա վրդ. Գ. տիպ) : — Նարեկ 1782, (8 տարի վերջ՝ նորէն) : — Ժամագիրք ատենի, 1786 : — Քաղաքավարութեան գիրք : — Խորհրդատուր Ս. պատարագի, 1787 : Գործք առաքելոց, 1788 : — Շարական, 1790 : — Այնուհետեւ Յովհաննէս մեռած ըլլալ կ'են-րադրուի, ու նոյն գործը կը շարունակէ առանձինն ՊՕԳՈՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ որուն պիտի անդ-րադատանք քիչ լստոյ :



(*) Կ. Պօլսոյ մէջ **առաջին** Օրացոյցը 1761 ին տպագրուած է : — Հայոց **բոլոր** օրացոյցներուն եւ տարե-ցոյցներուն ցանկը տես «Ամենուն Տարեցոյցը» 1911 տարի, **Փոխան յս առջս բանի** վերնագիրով գլուխին մէջ :